Կարգապահական գործ թիվ ԿԳ-15177

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2016 թվականի մարտի 17-ի թիվ 80-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/66-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎՍԵՓԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ նաև **Պալատ**) խորհուրդը (այսուհետ՝ նաև **Խորհուրդ**),

Նախագահությամբ՝ Խորհրդի անդամ Կարեն Սարդարյանի,

մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Սիմոն Բաբայանի, Նելլի Հարությունյանի, Մելանյա Առուստամյանի, Կարեն Մեժլումյանի, Հարություն Հարությունյանի և Տիգրան Խուրշուդյանի[1],

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ Պատասխանող փաստաբան Լուսինե Հովսեփի Սահակյանի (արտոնագիր թիվ 999), Պատասխանողի ներկայացուցիչ Նիկոլայ Բաղդասարյանի[2]

քննության առնելով փաստաբան Լուսինե Հովսեփի Սահակյանին (արտոնագիր թիվ 999) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքերը.</u>**

Խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանը (այսուհետ նաև՝ Դիմող) 02.12.2015թ.-ին ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված դիմումով խնդրել է գնահատել իր իսկ վարքագիծը՝ Պալատի շենքում փաստաբան Լուսինե Սահակյանի հետ ունեցած միջադեպի ժամանակ, որի ընթացքում, ըստ Դիմողի, Լուսինե Սահակյանը Դիմողի և Խորհրդի հասցեին հնչեցրել է անհարգալից բնույթ ունեցող արտահայտություններ, իսկ Դիմողն էլ, իր հերթին, Լուսինե Սահակյանին փոխադարձել է իրեն ուղղված արտահայտություններից մեկը:

<u>2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.12.2015թ. թիվ 364-Ա/ԿԳ-15177 որոշմամբ փաստաբան Լուսինե Հովսեփի Սահակյանի (արտոնագիր 999) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Պալատի

---

[1] Խորհրդի անդամներ Երվանդ Վարոսյանը և Լիպարիտ Սիմոնյանը հայտնել են ինքնաբացարկ:

[2] Պատասխանողի ներկայացուցիչ Նիկոլայ Բաղդասարյանը մասնակցել է միայն 17.03.2016թ. տեղի ունեցած նիստին և Խորհրդի անդամ Հարություն Հարությունյանին բացարկ հայտնելուց հետո հեռացել է:

ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 2.2.3 և 5.2.1 (1) ենթակետերի խախտման հատկանիշներով:

10.12.2015թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հունան Բաբայանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը

Դիմող՝ Մարտուն Փանոսյանն իր կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին հասցեագրված 02.12.2015թ. դիմումով հայտնել է հետևյալը.

«2015 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 18:30-ին փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-15081 կարգապահական գործով նշանակված է եղել խորհրդի նիստ:

Նշված նիստին խորհրդի անդամ Լուսինե Սահակյանը հրավիրվեց դահլիճ որպես վկա հարցաքննվելու նպատակով:

Ներկայանալով նիստին՝ Լուսինե Սահակյանը հայտնեց իր դիրքորոշումը իրեն որպես վկա հրավիրելու մասին և հրաժարվեց որպես վկա հարցաքննվելուց:

Իր դիրքորոշումը հայտնելուց հետո Լուսինե Սահակյանը հեռացավ խորհրդի նիստերի դահլիճից անելով ***«էս ով են սրանք արա»*** արտահայտությունը:

Լուսինե Սահակյանի՝ դահլիճից հեռանալուց հետո, ես՝ չցանկանալով խորհրդի նիստի ընթացքում հրապարակային քննարկում ծավալել և այդպիսով խափանել այդ պահին ընթացող նիստը, դուրս եկա նրա ետևից իր կողմից նիստի ժամանակ արված «էս ով են սրանք արա» արտահայտության վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով:

Միջանցքում ես և Լուսինե Սահակյանը վեճի բռնվեցինք և մեր միջև տեղի ունեցած խոսակցության ընթացքում Լուսինե Սահակյանն, իմ կարծիքով, դուրս գալով տարական մարդկային շփման էթիկայի սահմաններից, ինձ է ուղղել հետևյալ արտահայտությունները. ***«ռադդ քաշի», «դավայ եղար սրեղից», «լակոտ», «անասուն»*** և այլն:

Լուսինե Սահակյանի՝ նշված արտահայտությունների տեղատարափից հետո, մեր վիճաբանության ավարտին, ես Լուսինե Սահակյանին փոխադարձել եմ ինձ ուղղված ***«լակոտ»*** արտահայտությամբ:

Ես ավելի քան երկու տարի հանդիսանում եմ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ, որի կազմում ի պաշտոնե քննում եմ այլ փաստաբանների վարքագծում փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտման առկայության կամ բացակայության հարցը:

Ավելի քան երկու տարի ՀՀ փաստաբանների պալատում որպես վերապատրաստում, ինչպես նաև ՀՀ փաստաբանական դպրոցում ունկնդիրներին դասավանդում եմ «Դեոնթոլոգիա» (փաստաբանի վարքագծի կանոններ) առարկան:

Նման պայմաններում կարևորում եմ իմ՝ առաջին հերթին որպես խորհրդի անդամի և փաստաբանի վարքագծի կանոնների դասընթացավարի, իսկ հետո որպես փաստաբանի վարքագծի գնահատումը փաստաբանական էթիկայի շրջանակներում:

Ուստի, խնդրում եմ քննարկել 2015 թվականի նոյեմբերի 30-ին հիշատակված միջադեպը և գնահատել իմ վարքագիծը»:

Դիմումին կից որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:

Կարգապահական գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը 20.01.2016թ-ին տվել է գրեթե նույնաբովանդակ բացատրություն, միաժամանակ միջնորդել է որպես վկա հարցաքննել Պալատի ընդունարանի պատասխանատու Արուսյակ Ֆահրադյանին և փաստաբան Գևորգ Մկրտչյանին (արտոնագիր՝ 1229), և պահանջել և հետազոտել 2015 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 18:30-ին փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-15081 կարգապահական գործով նիստի ձայնային կրիչը:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին դրա տեղի և վայրի մասին պատշաճ ծանուցված Դիմողը չի ներկայացել, սակայն էլեկտրոնային նամակով հայտնել է, որ նիստին ներկայանալ չի կարող, քանի որ բացակայում է հանրապետությունից, և խնդրել է հիմք ընդունել իր 02.12.2015թ-ի դիմումը և 20.01.2016թ-ի բացատրությունը:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունը</u>

Պատասխանող Լուսինե Սահակյանը 08.02.2016թ-ին տվել է գրավոր բացատրություն այն մասին, որ իր կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի խախտում թույլ չի տրվել: Միաժամանակ խնդրել է ուսումնասիրել Պալատի միջանցքի տեսախցիկների տեսաձայնագրությունները և որպես վկա հարցաքննել տվյալ օրը փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական գործի քննությանը ներկա Խորհրդի անդամներին:

Սույն կարգապահական գործի քննության նպատակով հրավիրված Պալատի խորհրդի նիստին Պատասխանողը ներկայացել է և գործի վերաբերյալ բացատրություն է տվել այն մասին, որ 2015 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 18:30-ին փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական գործով նշանակված խորհրդի նիստին նա հրավիրվել է որպես վկա: Ներկայանալով նիստին՝ արտահայտել է իր դիրքորոշումն այն մասին, թե արդյոք նա պետք է որպես վկա հանդես գա տվյալ կարգապահական գործով Լուսինե Սահակյանը դուրս է եկել խորհրդի նիստերի դահլիճից և դուրս է եկել պատշգամբ՝ հեռախոսով խոսելով:

Իր ետևից դուրս է եկել Դիմողը, ով կարգապահական նիստի ժամանակ նստած է եղել իրենից բավականին հեռու, մոտեցել է Պատասխանողին՝ «մտնելով քիթս», ինչին ի պատասխան Պատասխանողը նրան ասել է այն կողմ գնալ, քանի որ իր համար Դիմողը «գոյություն չունի», և նա Դիմողին նույնիսկ չի էլ բարևում և Դիմողի հետ չի խոսում՝ նրան չվիրավորելու համար, սակայն Դիմողը շարունակել է իրեն մոտ մնալ և իր հետ խոսել, ինչի կապակցությամբ ստացել է նրան արժանի պատասխան:

Պատասխանողը հավելել է նաև, որ չի հասկանում, թե Դիմողի նման անսկզբունքային մարդն ինչին էր սպասում, իրենից պարզաբանումներ պահանջելով:

Պատասխանողն իր բացատրությունում հայտնել է, որ նա չի ափսոսում իր բառերի համար, և որ դեռևս չի ծնվել այնպիսի մարդ, այն էլ՝ Դիմողը, ով կարող է «մտնել Լուսինե Սահակյանի քիթը և նմանատիպ պատասխան չստանալ»:

Իր բացատրությունում Պատասխանողը հայտարարել է նաև, որ Դիմողն իր համար մարդ չի, չունի սկզբունքներ, և որ նա գտնում է, որ Դիմողն իր՝ Պատասխանողի,

բառերից չի վիրավորվել, քանի որ իր դեմ համապատասխան հայց չի ներկայացրել դատարան:

Իր բացատրությունում Պատասխանողը հայտարարել է նաև, որ նշված օրը որևէ վերապատրաստման դասընթաց չի եղել, ուստի վկաներից մեկը ստում է:

Պատասխանողը դիրքորոշում է հայտնել նաև այն մասին, որ նշված հարցը և այն բառերը, որոնք նա ասել է Դիմողին, չեն հանդիսանում Խորհրդի քննարկման առարկա, քանի որ փաստաբանների վարքագիծը կանոնակարգելիս Խորհուրդը պետք է քննարկի փաստաբանների միջև ծագած միայն այն հարցերը, որոնք նրանց միջև ծագել են քրեական կամ այլ գործի հետ կապված:

Պատասխանողը հրաժարվել է Խորհրդի հարցերին պատասխանել:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով որպես վկա հրավիրվել է՝

1. **փաստաբան Լիպարիտ Սիմոնյանը**

   Վկա Լիպարիտ Սիմոնյանը չի ներկայացել Խորհրդի նիստին, սակայն էլեկտրոնային փոստով ներկայացրել է գրություն, որտեղ մասնավորապես հայտնել է, որ Լուսինե Սահակյանի կողմից որևէ վիրավորական արտահայտություններ խորհրդի նիստի ժամանակ չեն եղել:

2. **փաստաբան Ալեքսանդր Սիրունյանը**

   Վկա Ալեքսանդր Սիրունյանը ներկայացել է խորհրդի նիստին, և Պատասխանողի հարցին՝ այդ օրը դահլիճից դուրս գալով արդյոք Պատասխանողը նման արտահայտություն կատարել է թե ոչ՝«Էս ով են սրանք արա», վկա Ալեքսանդր Սիրունյանը պատասխանեց՝ չի եղել նման բան:

   Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին՝ վկա Ալեքսանդր Սիրունյանը հայտնեց հետևյալը.

   …

   Կարեն Սարդարյան *- «Էս ով են սրանք արա» էտ արտահայտությունը եղել է: Լսել եք:*

   Ալեքսանդր Սիրունյան*- Չի եղել նման բան:*

   Կարեն Սարդարյան*- … Իսկ ասենք խորհրդի դահլիճից դուրս եղել է վիրավորական արտահայտություններ «ռադդ քաշի», «դավայ եղար սրտեղից»,«լակոտ»,«անասուն» նմանատիպ բառեր:*

   Ալեքսանդր Սիրունյան*- Չէ:*

   Կարեն Սարդարյան*- Չի՞ եղել, թե Դուք չեք լսել:*

   Ալեքսանդր Սիրունյան*-Ես որ չեմ լսել:*

   Կարեն Սարդարյան*- Կարող լիներ Դուք չլսեիք, ասենք հետո…*

   Ալեքսանդր Սիրունյան*- Չէ, չէ հնարավոր չէր: Բարձր տոնայնությանը որ լսեցինք, ես ու պարոն Սիմոնյանն ենք վազել դուրս առաջինը:*

   Կարեն Սարդարյան*- Շնորհակալություն: Այլ հարցեր կան պարոն Սիրունյանին: Խնդրեմ պարոն Բաբայան:*

Սիմոն Բաբայան- *Ո՞ր պահին Դուք դուրս եկաք պարոն Սիրունյան խորհրդի նիստերի դահլիճից: Դուք նոր նշեցիք, որ «Ես ու Սիմոնյանն ենք դուրս եկել»: Ո՞ր պահին Դուք դուրս եկաք:*
Ալեքսանդր Սիրունյան- *Երբ որ խոսակցությունը լսեցինք:*
Սիմոն Բաբայան- *Ինչ խոսակցություն էր:*
Ալեքսանդր Սիրունյան- *Չէ խոսակցությունը մենք չենք լսել, մենք ձայներն ենք լսել…*
Սիմոն Բաբայան- *Ձայները…*
Ալեքսանդր Սիրունյան- *երկուսի ձյաները ընդ որում:*
Սիմոն Բաբայան- *Այ խնդրում եմ կնկարագրեք մանրամասն, ինչ իրավիճակ էր տեղի ունենում այն պահին, երբ որ Դուք դուրս եկաք խորհրդի նիստերի դահլիճից:*
Ալեքսանդր Սիրունյան- *Նկատի ունե՞ք դուրսը:*
Սիմոն Բաբայան- *Այո:*
Ալեքսանդր Սիրունյան- *Բացատրեցի ինչ էր տեղի ունենում: Ընդհանում էր բարձր տոնայնությամբ զրույց:*
…
Սիմոն Բաբայան- *… Եվ ասում եք վիճաբանություն էր տեղի ունենում բարձր ձայներ էին; Ինչի՞ մասին էին խոսում: Ի՞նչ արտահայտություններ էին հնչեցվում այդ պահին:*
Ալեքսանդր Սիրունյան- *Արտահայտություններ չենք լսել, որովհետև մենք որ վազեցինք դուրս պարոն Սիմոնյանի հետ արդեն զրույցն ավարտվում էր:*
…
Հարություն Հարությունյան- *Պարոն Սիրունյան մեկ հարց ևս ուզում եմ հնչեցնել, երբ որ միջանցքում էիք բացի Ձեզանից, Լիպարիտ Սիմոնյանից, տիկին Սահակյանից և Մարտուն Փանոսյանից այլ անձ նկատեցիք ներկա է եղել, համապատասխան չաքերտավոր ասած միջադեպին:*
Ալեքսանդր Սիրունյան- *Այ էտ չեմ կարող հիշել, աղջիկները կարծեմ նստած էին ընդունարանի:*

3. **Ընդունարանի պատասխանատու Արուսյակ Ֆահրադյան**

Վկա Արուսյակ Ֆահրադյանը 29.01.2016թ. տվել է բացատրություն, որտեղ մասնավորապես նշել է, որ 2015թ. նոյեմբերի 30-ի ժամը 18:30-ին նշանակված էր կարգապահական նիստ: Այդ ժամից սկսած ինքը գտնվել է ընդունարանում, որը գտնվում է պալատի սրահում: Ժամը 19-ի սահմաններում խորհրդի նիստերի դահլիճից դուրս եկավ խորհրդի անդամ Լուսինե Սահակյանը՝ հեռախոսով խոսելով: Նրա հետևից դուրս եկավ խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանը: Երբ Լուսինե Սահակյանը խոսեց վերջացրեց Մ. Փանոսյանը մոտեցավ նրան և ինչ-որ բան ասաց, որն ինքը չի լսել: Դրան ի պատասխան Լ.Սահակյանը սկսեց բղավել և Մ.Փանոսյանին ասում էր «ռադտ քաշի, լակոտ, անասուն» և նման այլ արտահայտություններ, որոնք բառացիորեն չի հիշում: Մ.Փանոսյանը նրան պատասխանեց «դու ինձ մի ասա ինչ անեմ, քեզ կնոջ պես պահի»: Նրանք դրանից հետո ընդունարանի հատվածից փոքր ինչ հեռացել են

դեպի պատշգամբ և ինքը այլևս չի լսել իրենց խոսակցությունները: Մ. Փանոսյանի կողմից բացի նշված արտահայտություններից այլ արտահայտություններ չի լսել: Արուսյակ Ֆահրադյանը նշել է նաև, որ նկարագրված միջադեպի ընթացքում միջանցքում եղել են նաև այլ անձինք, սակայն չի կարող մտաբերել թե կոնկրետ ովքեր, հիշում է միայն փաստաբան Գևորգ Մկրտչյանին, քանի որ նա կանգնած էր ընդունարանի կողքին:
Ներկայանալով Խորհրդի նիստին և պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին, հայտնեց, որ Լուսինե Սահակյանը, հեռախոսով խոսելով դուրս եկավ խորհրդի դահլիճից, մի քանի րոպե հետո դուրս եկավ Մարտուն Փանոսյանը ու մոտեցավ Լուսինե Սահակյանին, հետո լսել է, որ Լուսինե Սահակյանը ասել է «ռադտ քաշի», հետո միայն բղավոցներ է լսել: Լուսինե Սահակյանից լսել է նաև «անասուն», «լակոտ» բառերը: Մարտուն Փանոսյանը ինչ-որ բան ասելա, բայց էլ ինքը չի լսել ,որովհետև հանգիստ տոնով էր խոսում:

4. **Փաստաբան Գևորգ Մկրտչյան**

Վկա Գևորգ Մկրտչյանը 29.01.2016թ. տվել է բացատրություն, որտեղ մասնավորապես նշել է, որ 2015թ. նոյեմբերի 30-ի երեկոյան ինքը գտնվում էր փաստաբանների պալատի շենքում՝ ժամը 18:30-ին նշանակված «Միջազգային առուծախի իրավական կարգավորումը» թեմայով վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար, որը դասընթացավարի չներկայանալու պատճառով հետաձգվում էր, ուստի ինքը միջանցքում սպասում էր: Այդ տարածքում հանդիպել է փաստաբան Կրոմվել Գրիգորյանին, ով հայտնել է, որ խորհրդում քննվում է իր վերաբերյալ հարուցված կարգապահական գործը և առաջարկել է սպասել իրեն՝ գործի քննության ավարտից հետո միասին դուրս գալու համար, քանի որ տուն տանող ճանապարհը նույն է: Երբ ինքը սպասում էր նշված նիստի ավարտին, ժամը մոտավորապես 19:00-ից 19:30-ն ընկած հատվածում, խորհրդի սենյակից դուրս եկավ փաստաբան, խորհրդի անդամ Լուսինե Սահակյանը, վերջինիս քիչ հետո հաջորդեց փաստաբան, խորհրդի անդամ Մարտուն Փանոսյանը: Լուսինե Սահակյանը հեռախոսով խոսում էր, իսկ, երբ ավարտեց, Մարտուն Փանոսյանը մոտեցավ վերջինիս: Իր և վերջիններիս միջև տարածությունը թույլ էր տալիս ակամայից լսել նրանց խոսակցությունն, ըստ որի Մարտուն Փանոսյանը Լուսինե Սահակյանին հորդորում էր իր նկատմամբ անհարգալից վերաբերմունք չցուցաբերել, սակայն Լուսինե Սահակյանն անդրդվելի էր, ասում էր. «տո դու ինձ մի ասա արա, ես ինձ ոնց պահեմ», «դու ըտէ ամենապասլեդնի մարդն ես», հետո Մարտուն Փանոսյանը պահանջեց իր նկատմամբ պատշաճ վարքագիծ դրսևորել, իսկ Լուսինե Սահակյանն էլ ավելի բարձր տոնով սկսեց բղավել. «ռադտ քաշի լակոտ», «անասուն» և այլն: Մարտուն Փանոսյանի և Լուսինե Սահակյանի միջև տեղի ունեցած, նկարագրած միջադեպը տևեց ընդամենը 3-5 րոպե: Գևորգ Մկրտչյանը նշել է, որ իրեն թվաց, որ Մարտուն Փանոսյանը Լուսինե Սահակյանի բղավոցից շփոթված էր, ինքը նույնպես շփոթված էր, այնքան, որ այդ պահին չի կողմնորոշվել, թե ինչպես վարվել՝ մոտենա՞լ, ու՞մ կամ ի՞նչ հորդորել, ուստի գերադասել է զերծ մնալ միջամտությունից:

Ներկայանալով Խորհրդի նիստին և պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին՝ Գևորգ Մկրտչյանը հայտնել է, որ 2015 թվականի նոյեմբերի 30-ին գտնվել է պալատում Միջազգային առուծախի կարգավորման իրավական թեմայով Հայկյանցի վերապատրաստման դասընթացին մասնակցելու համար, քանի որ վերապատրաստման դասընթացը ուշանում էր ինքը եղել է միջանցքում: Տիկին Սահակյանը դուրս է եկել խորհրդի նիստերի դահլիճից, կարծես թե հեռախոսով էր խոսում ու նրան հաջորդեց Մարտուն Փանոսյանը: Մարտուն Փանոսյանը մոտեցել է Լուսինե Սահակյանին, երբ վերջինս ավարտեց հեռախոսային խոսակցությունը: Մարտուն Փանոսյանը Լուսինե Սահակյանին հորդորում էր կարծես թե խնդրանքի տեսքով «պետք չէ էդպես խոսել իմ հետ: Պետք չէ էդպես վերաբերվել», Լուսինե Սահակյանը արել է հետևյալ արտահայտությունները «Դու ինձ մի ասա արա ես ինձ ոնց պահեմ» «Դու տեղ ամենա պոսլեդնի մարդն ես»: Մարտուն Փանոսյանն էլ այդ պատասխաններից ավելի երևի պահանջկոտությամբ ասել է, որ «Ես պահանջում եմ, որ դու այդպիսի արտահայտություններ իմ նկատմամբ չօգտագործես»: Լուսինե Սահակյանը էլ ավելի է բորբոքվել, գոռում էր «ռադդ քաշի», «լակոտ», «անասուն»: Այ էս բառակապակցությունները որոնք հստակ իր մոտ տպավորվել են: Հայտնել է որ միջանցքում բացի իրենից մի քանի հոգի էլ կային, երևի հենց էտ վերապատրաստման դասին էին սպասում, փաստաբաններ էին: Խորհրդի անդամներից, բացառությամբ տիկին Սահակյանի ու Մարտուն Փանոսյանի, էտ իրադարձության ժամանակ որևէ մեկը ներկա չէր: Միջադեպի ավարտից հետո խորհրդի սենյակի դռները բացվել են, բայց այդ ժամանակահատվածում իր նշած դեպքին ոչ ոք չի եղել խորհրդի անդամներից դրսում:

<u>4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործը հանձնվել է Պալատի կարգապահական գործ նախապատրաստող անձ Հունան Բաբայանին, ով հավաքագրելով և ուսումնասիրելով գործին վերաբերող ապացույցները, 2016 թվականի փետրվարի 10-ին կազմել է եզրակացություն, ըստ որի.

«Հիմք ընդունելով Վարույթի կարգի 22-րդ կետը, ապացույցների հետազոտման և գնահատման արդյունքում, գտնում եմ որ.

Փաստ 1.

- Դիմող Մ. Փանոսյանի դիմումի և բացատրության համաձայն *Լ. Սահակյանի կողմից պալատի խորհրդի նիստի ժամանակ հնչեցվել է **«էս ով են սրանք արա»** արտահայտությունը*, ինչի կապակցությամբ ինքը Լ. Սահակյանի հետևից դուրս է եկել միջանցք,

Փաստ 2.

- Դիմող Մ. Փանոսյանի դիմումի և բացատրության համաձայմ *Լ. Սահակյանի կողմից Պալատի միջանցքում իր հասցեին հնչեցվել են **«ռադդ քաշի», «դավայ եղար ստեղից», «լակոտ», «անասուն»*** և այլ նման արտահայտությունները:

- Վկաներ Ա. Ֆահրադյանի և Գ. Մկրտչյանի բացատրությունների համաձայն *Լ. Սահակյանի կողմից Մ. Փանոսյանի հասցեին հնչեցվել են* ***«տո դու ինձ մի ասա, արա, ես ինձ ոնց պահեմ», «դու ըտե ամենապասլեդնի մարդն ես», «ռադդ քաշի լակոտ», «անասուն»*** և այլ նմանատիպ արտահայտությունները»:

Եզրակացության վերաբերյալ առարկություն չի ներկայացվել:

12.02.2016թ. գործը հանձնվել է Խորհրդին (նիստը նախագահողին):

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2016 թվականի մարտի 10-ին ժամը՝ 18:30-ին և 17-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

<u>5. Գործի փաստերը՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ՝ Վարույթի կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1) 2015 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 18:30-ին փաստաբան Կրոմվել Գրիգորյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԳ-15081 կարգապահական գործով նշանակված է եղել խորհրդի նիստ: Նշված նիստին խորհրդի անդամ Լուսինե Սահակյանը հրավիրվել էր որպես վկա:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, վկաների ցուցմունքներով, թիվ ԿԳ-15081 կարգապահական գործ ձայնային կրիչով:

2) 2015 թվականի նոյեմբերի 30-ին ժամը 18:30-ին թիվ ԿԳ-15081 կարգապահական գործով նիստը սկսելուց մոտ 20-25 րոպե անց Լուսինե Սահակյանը հայտնել է իր դիրքորոշումն իրեն որպես վկա հրավիրելու մասին և հրաժարվել է որպես վկա հարցաքննվելուց, այնուհետև լքել նիստերի դահլիճը: Պատասխանողի՝ դահլիճից հեռանալուց հետո, Դիմողը դուրս է եկել Լուսինե Սահակյանի ետևից:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, վկաներ՝ Ալեքսանդր Սիրունյանի, Արուսյակ Ֆահրադյանի, Գևորգ Մկրտչյանի ցուցմունքներով, թիվ ԿԳ-15081 կարգապահական գործի ձայնային կրիչով:

3) Պալատի միջանցքում Պատասխանողը բորբոքված Դիմողին է ուղղել «ռադդ քաշի», «դավայ եղար ստեղից», «լակոտ», «անասուն» արտահայտությունները:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի բացատրություններով, վկաներ՝ Արուսյակ Ֆահրադյանի և Գևորգ Մկրտչյանի ցուցմունքներով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 09.03.2016թ. տրամադրված ՈԸԴՂ/ԿԳ/253-16 տեղեկանքի համաձայն Լուսինե Սահակյանն արտոնագիրը ստացել է 12.11.1996թ.: Լուսինե Սահակյանի նկատմամբ 2006-2016թթ ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 07.12.2015թ. թիվ 364-Ա/ԿԳ-15177 որոշմամբ հարուցված կարգապահական գործի):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը

Գնահատելով գործում առկա ապացույցները, Խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լուսինե Հովսեփի Սահակյանի նկատմամբ 2015 թվականի դեկտեմբերի 07-ին հարուցված կարգապահական վարույթի արդյունքում Լուսինե Հովսեփի Սահակյանը ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 5.2.1 (1) ենթակետի պահանջների խախտման համար, իսկ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի հիմքով հարուցված գործի վարույթը ենթակա է կարճման ներքոհիշյալ պատճառաբանությամբ:

7.1. Հայտնված բացարկների վերաբերյալ

Պատասխանող Լուսինե Սահակյանը և նրա ներկայացուցիչը բացարկներ են հայտնել խորհրդի անդամներին, որոնք քննարկվել և մերժվել են:

Ա. Խմբային կարգով բացարկի քննարկման հարցը

Լուսինե Սահակյանը խմբային բացարկ է հայտնել, սակայն Խորհուրդը բացարկները քննարկել է առանձին-առանձին:

Խորհուրդը հիշեցնում է, որ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *կարգապահական գործը քննող պալատի խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն կեսը*:

Պալատի կանոնադրության 16.17. կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա գտնվող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, բաց քվեարկությամբ, բացառությամբ սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերի*:

Վարույթի կարգի 8-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհրդի անդամին հայտնված բացարկը լուծվում է Պալատի խորհրդի կողմից՝ բացարկված խորհրդի անդամի բացակայությամբ:*

Խորհրդի կողմից Լուսինե Սահակյանի խմբային բացարկը քննարկելու դեպքում, այն կհակասեր Վարույթի կարգի 8-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջին, ինչպես նաև պարադոքսալ իրավիճակ կստեղծեր, քանի որ Խորհուրդը քվորում չէր ունենա: Եթե Լուսինե Սահակյանի մոտեցումը իրավաչափ ընդունվի, ապա ցանկացած կարգապահական գործով կարգապահական պատասխանատվության ենթարկվող փաստաբանը խորհրդի ամբողջ կազմին կարող է բացարկ հայտնել ու վիժեցնել հնարավոր որոշումը: Խորհուրդը հիշեցնում է, որ Վարույթի կարգի 8-րդ հոդվածի 7-րդ մասը **<u>եզակի</u>** թվով է խոսում բացարկի հարցը լուծելու մասին:

Բ. Խորհրդի անդամները կարող են արդյո՞ք մասնակցել այն գործի քննությանը, որով կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսացող արարքին ականատես են եղել:

Նշված հարցի շուրջ Պալատի խորհուրդն իր դիրքորոշումը հայտնել է դեռևս 09.10.2015թ. որոշմամբ, որտեղ մասնավորապես նշել է, որ կատարված արարքին ականատես լինելը դեռ չի նշանակում դրան առնչվել, ավելին՝ դրանով շահագրգիռ լինել, այսինքն՝ կատարված արարքին Խորհրդի անդամի միայն ականատես լինելու հանգամանքը Խորհրդի նիստում տվյալ հարցի քննարկմանը նրա մասնակցությունը բացառող հանգամանք չէ:… Եթե խորհրդի անդամի միայն ականատես լինելու փաստը համարվի վերջինիս վարույթին մասնակցելը բացառելու հիմք, ապա որոշ դեպքերում դա կարող է Պալատի խորհրդի՝ Կանոնագրքի պահպանման նախազգուշական (պրևենտիվ) նպատակը ձախողել: Մասնավորապես, Պալատի խորհրդի նիստերի ժամանակ փաստաբանները կարող են թույլ տալ Վարքագծի կանոնագրքի խախտումներ (թեկուզև միմյանց կամ խորհրդի անդամներին վիրավորել), իսկ խորհուրդը իր անդամների կազմով դեպքին ականատես լինելու պատճառով, չի կարողանա քննել տվյալ գործը:

Խորհուրդն արձանագրում է, որ սույն կարգապահական գործի քննության ընթացքում Պատասխանողի ներկայացուցիչ փաստաբան Նիկոլայ Բաղդասարյանը պատասխանելով Խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանի հարցին հայտնել է նմանատիպ դիրքորոշում, մասնավորապես.

Կարեն Մեժլումյան - … Այ եթե ասենք այդ պրիզմայով նայենք երևույթին Դուք ինչ եք պատկերացնում դատարանը որպես այդպիսին կարող է լուծարվել գոյություն չունենալ, այն բանի համար օրինակ, որ ասենք որևէ արարք, վերացական եմ ասում հիմքը վերաբերում է նրան որ դատարանը որպես այդպիսին չգործի: Կատարվել է, օրինակ խորհրդի նիստերի դահլիճում, խորհրդի անդամները ներկա են գտնվել, այսինքն որպես այդպիսին, օրինակ անձը, որը որ ամենակոպիտ խախտումն է արել, այդ գրպանի փաստաբանի արարքը, որը որ պետք է ասենք օրինակ դադարեցվի, գալիս է խորհրդի նիտերի դահլիճում, վիրավորում է բոլորին և այլն: Ասում է լավ եմ արել, միշտ էլ անելու եմ, ձեզ բացարկ եմ հայտնում ձեզ այդ հիմքով վիրավորել եմ, և իմ գործը այլևս չեք կարող քննել, փաստաբանը դա ասում է, և խորհուրդը ասենք եթե էտ նույն տրամաբանությամբ գնանք չի կարող էտ գործը քննել և ամեն նիստին կգան ու տենց կշարունակեն: Սրա հետ կապված Դուք գտնում եք, որ կարող է խորհուրդը ըստ Ձեզ դատարանը լուծարվի, նման գործերով:

Նիկոլայ Բաղդասարյան-… ընդունեք ուզում եմ, որ ավելի պատկերացնեք իմ տեսակետը, եթե էս առաջին ատյան լինի և կարող եք գործը հանձնել մի այլ դատավորի սա որևէ խնդիր չկա, բայց եթե դա վերջին ատյաննա, կամ դա վերաքննիչ դատարաննա որտեղ բոլորը ինքնաբացարկ են հայտնել, մնացելա մեկ դատավոր, որ փոխել հնարավոր չէ, էտ դեպքում պիտի էտ մարմինը շարունակի գործելը…:

Գ. Պատասխանողը խորհրդի անդամներ Մելանյա Առուստամյանին, Սիմոն Բաբայանին և Կարեն Մեժլումյանին հայտնել է բացարկներ՝ հիմքում, ըստ էության, դնելով այն հանգամանքը, որ խորհրդի նշված անդամները, բացի խորհրդի անդամ հանդիսանալուց միաժամանակ տարբեր պաշտոններ են զբաղեցնում փաստաբանների պալատում, փաստաբանական դպրոցում և հանրային պաշտպանի

գրասենյակում: Պատասխանողը հայտնել է, որ իր և Պալատի նախագահի միջև լուրջ խնդիր կա:

Պալատի խորհուրդը, Վարույթի կարգին համապատասխան քննարկելով հայտնված բացարկները, դրանք մերժել է:

Նշված հարցի շուրջ Պալատի խորհուրդն իր մանրամասն դիրքորոշումը հայտնել է 2015 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ԿԳ/214-Ա որոշմամբ, որտեղ մասնավորապես նշել է՝ Պալատի նախագահի դիրքորոշումը նշված գործին դրսևորվել է ի պաշտոնե, կարգապահական վարույթ հարուցելու վարքագծով՝ դիմողի դիմումի հիման վրա: Ավելին, վարույթ հարուցելուց բացի Պալատի նախագահը կարգապահական վարույթի վրա ազդելու որևէ լիազորություն չունի:

Կարեն Մեժլումյանը, Պալատի նախագահի բացակայության դեպքում, խորհրդի նիստերն է նախագահում, ինչպես նաև որակավորման քննությունների գծով բողոքների դեպքում՝ նախագահում է խորհրդի նիստերը: Որևէ կախվածություն չունի Պալատի նախագահից:

Սիմոն Բաբայանը հանդիսանում է ՀՀ փաստաբանական դպրոց հիմնադրամի տնօրեն: Փաստաբանական դպրոցի հիմնադիրը Պալատն է, սակայն վերջինս Փաստաբանական դպրոցի անդամը չէ, քանի որ հիմնադրամը անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է: Փաստաբանական դպրոցի տնօրենը հանդիսանում է գործադիր մարմնի ղեկավարը և Պալատի նախագահից որևէ կախվածություն չի կարող ունենալ:

Մելանյա Առուստամյանին Պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար է նշանակել Պալատի խորհուրդը: Պալատի նախագահը միայն կարող է առաջարկել թեկնածություն, սակայն նշանակման լիազորությունը պատկանում է խորհրդին: ՀՊԳ ղեկավարի աշխատավարձի չափը սահմանվում է օրենքով և ոչ պալատի նախագահը և ոչ էլ խորհուրդը չափի փոփոխման մասով լիազորություն չունեն:

Պալատի ՀՊԳ ղեկավարն ունի աշխատանքային երաշխիքներ և կախված է խորհրդից ու ոչ թե՝ պալատի նախագահից:

Հատկանշական է, որ Պալատի խորհրդի 2016 թվականի մարտի 4-ի թիվ 7/9-Լ որոշմամբ հաստատվել է Պալատի 2015 թվականին ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվությունը և ըստ տեղեկությունների (հավելված 1, էջ 86)՝ բողոքի (սանկցիայի) հիմքով հարուցված 55 կարգապահական վարույթներից 28-ով կայացվել է կարճման որոշումներ, իսկ 27-ով՝ տույժի ենթարկելու մասին որոշումներ:

Այս վիճակագրությունը նույնպես հաստատում է այն փաստը, որ խորհուրդը կամ առանձին անդամներ ոչ ինստիտուցիոնալ, ոչ գործառութային և ոչ էլ փաստացի՝ չեն կարող կախման մեջ լինել Պալատի նախագահից:

Դ. Պատասխանողը խորհրդի անդամ Հարություն Հարությունյանին հայտնել է բացարկ:

Խորհուրդը մերժել է այդ բացարկը, նկատի ունենալով, որ Հարություն Հարությունյանի՝ Մարտուն Փանոսյանի հետ համակուրսեցի կամ մտերիմ լինելու փաստն ինքնին չի կարող համարվել բացարկի հիմք: Փաստաբանների մեծ մասը միմյանց համակուրսեցիներ են կամ մտերիմներ են: Ավելին, Պալատը նույնպես խրախուսում է փաստաբանների՝ գործընկերային հարաբերություններ հաստատելը: Այս պարագայում,

Պալատի որևէ ինստիտուտ չի կարողանա արդյունավետ գործել, եթե դա լինի կաշկանդող հանգամանք:

Նմանատիպ դեպքերում, խորհրդի անդամն ինքը պետք է ազնվության սկզբունքով ղեկավարվելով նշի, թե իր մասնակցությունն այդ գործով կարող է կողմնակալ լինել, թե՝ ոչ:

7.2. Պատասխանատվության հարցի վերաբերյալ

Ա. Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի մասով

Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի համաձայն. «Փաստաբանը չպետք է թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ»:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, այս նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստակազմը՝

- արդյո՞ք Պատասխանողը փաստաբան հանդիսացող Դիմողի նկատմամբ թույլ է տվել այնպիսի գործողություններ ու արտահայտություններ, որոնք արատավորում եմ արժանապատվությունը և փաստաբանի համբավը:

Նշված հարցին պատասխանելուց առաջ Խորհուրդն արձանագրում է, որ Պատասխանողի այն դիրքորոշումը, թե Կանոնագրքի վերը նշված պահանջը վերաբերում է միայն որևէ դատական գործի կապակցությամբ իրար հետ շփում ունեցող փաստաբաններին, չի բխում Կանոնագրքի ընդհանուր նպատակներից, սկզբունքներից ու տրամաբանությունից, ուստի այն անհիմն է:

Խորհուրդն արձանագրում է, որ Կանոնագրքի 5.2.1 (1) ենթակետի պահանջը գործում է ցանկացած դեպքում, երբ երկու անձանց միջև հարաբերություններն ընթանում են փաստաբան-փաստաբան հարթության վրա, այսինքն՝ հարաբերությունները կապված են ոչ թե վերջիններիս անձնական, այլ՝ մասնագիտական գործունեության հետ (վստահորդներին ցույց տրվող իրավաբանական օգնության հետ) կամ փաստաբանական համայնքում իրականացվող այլ հանրային (բացի վիճող կողմերից առնվազն երրորդ անձի ներկայություն) վարքագծի հետ (օրինակ, Խորհրդի անդամների միջև կամ Խորհրդի (Խորհրդի անդամների) և այլ փաստաբանների միջև շփում՝ կապված Խորհրդի գործունեության հետ, վերապատրաստման դասընթացներին և այլ քննարկումներին փաստաբանների միջև շփում և այլն):

Խորհուրդը հիշեցնում է, որ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Այս առումով կարևոր է հիշել, որ փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը, հետևաբար, իր վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, այդ թվում՝ իրավաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես:

Փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորման ու ամրապնդման գործում շատ կարևոր է փաստաբանի և իր կոլեգաների միջև հարաբերությունների կառուցումը:

Փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:

Այլ փաստաբանի մասնագիտության, անձնավորության, գործնական համբավի նկատմամբ հարգանքը պետք է լինի յուրաքանչյուր փաստաբանին ուղղորդող կանոն, քանի որ նրա բարոյական պարտականությունն է փաստաբանի կոչման արժանապատվության և փաստաբանության հեղինակության մասին հոգալը:

Այսպիսով, Կանոնագրքի կանոնը՝ այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ թույլ չտալու վերաբերյալ, փաստաբանական էթիկայի հիմնաքարն է, քանի որ չի կարող իր նկատմամբ հարգանք ակնկալել այն կառույցը, որի անդամները, մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում միմյանց նկատմամբ չեն ցուցաբերում փոխադարձ հարգանք և կոռեկտություն:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Պատասխանողը Դիմողի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, վերջինիս հասցեին ինչեցրել է պատիվը և արժանապատվությունը արատավորող մի շարք արտահայտություններ, որոնք կապված չեն եղել կողմերի անձնական հարաբերությունների հետ:

Ի դեպ, Պատասխանողը կարգապահական նիստի ժամանակ տրված իր բացատրությամբ մասնակի ընդունել է նշված փաստը:

Այսպես, Պատասխանողը նշում է, որ Դիմողը ստացել է իրեն արժանի պատասխան, հավելելով, որ չունի բարձր կարծիք Դիմողի անձնական և մասնագիտական հատկանիշների վերաբերյալ, և որ Դիմողին այդ օրն ուղղված իր խոսքերի համար Պատասխանողը չի զղջում: Պատասխանողը նշել է նաև, որ Դիմողին նույնիսկ չի էլ բարևում և Դիմողի հետ չի խոսում՝ նրան չվիրավորելու համար:

Խորհրդի այն հարցին, թե ինչ արտահայտություններ է ուղղել Դիմողին, որոնց համար չի զղջում, Պատասխանողը հրաժարվել է պատասխանել:

Վկաներ Ա. Ֆահրադյանը և Գ. Մկրտչյանը իրենց գրավոր և բանավոր բացատրություններում հստակ նշել են, թե Պատասխանողի կողմից հիշատակված բանավեճի ընթացքում կոնկտետ ինչ արտահայտություններ է ուղղել Պատասխանողը Դիմողին, այն է ***«ռադդ քաշի», «լակոտ», «անասուն»***, ինչը հաստատում է նաև Դիմողն իր դիմումում և բացատրությունում:

Բացի այդ, վկա Ա. Սիրունյանն իր բացատրություններում նշել է, որ դեպքի պահին Պալատի միջանցքից լսել է բղավոցներ, սակայն բառեր չի կարողացել տարբերակել, և երբ դուրս է եկել միջանցք, վիճաբանությունն արդեն ավարտվել է:

Նշված արտահայտությունները, Խորհրդի գնահատմամբ, հանդիսանում են պատիվը և արժանապատվությունը արատավորող, և ընդունելի չեն փոխադարձ հարգանքի վրա կառուցված հարաբերություններում փաստաբանի բարձր կոչումը կրող անձանց միջև:

Անդրադառնալով նշանակվելիք կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում խախտման բնույթը, ինչպես նաև փաստաբան Լուսինե Սահակյանի անձը բնութագրող հանգամանքները, մասնավորապես այն, որ վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթներ նախկինում չեն հարուցվել:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝

1) նկատողություն (…)

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների (…):

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու ժամաքանակը որոշում է փաստաբանների պալատի խորհուրդը: Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը կարող է կիրառվել նաև որպես լրացուցիչ տույժի միջոց սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված տույժերից մեկի կիրառման հետ մեկտեղ:

Տվյալ դեպքում Պատասխանողն առաջին անգամ թույլ է տվել կարգապահական խախտում, որը կապված է փաստաբանների միջև հարաբերությունների հետ:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի շրջանակներում ահրաժեշտ է ընտրել «նկատողություն» կարգապահական տույժի տեսակը, ինչպես նաև սահմանել լրացուցիչ տույժ՝ Պատասխանողի հաշվին վեցամսյա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ դեոնթոլոգիա թեմայով 8 ակադեմիական ժամ ժամաքանակով:

Բ. Կանոնագրքի 2.2.3 ենթակետի մասով

Կանոնագրքի 2.2.3 ենթակետի համաձայն. «*Մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը»:*

Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:*

Տվյալ դեպքում, Պատասխանողի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետի խախտում թույլ տալու փաստը (Լ. Սահակյանի կողմից Խորհրդի նիստի ժամանակ **«էս ով են սրանք արա»** արտահայտությունը հնչեցնելը) վկայակոչել և ներկայացրել է Դիմողը, ուստի նա կրում է նշված փաստի ապացուցման պարտականությունը:

Մինչդեռ, Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ Լուսինե Սահակյանը նման արտահայտություն է թույլ տվել: Միայն դիմողի բացատրությունը, Խորհուրդը բավարար չի համարում այդ փաստը հաստատված համարելու համար, իսկ որպես ապացույց ներկայացված ձայնային կրիչի ձայնագրությունից հնարավոր չէր հստակ լսել արտահայտության բովանդակությունը: Չփարատված կասկածները պետք է մեկնաբանվեն հօգուտ պատասխանողի:

Փաստորեն, սույն կարգապահական գործի շրջանակներում հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը՝ Կանոնագրքի 2.2.3 ենթակետի մասով:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի, 2-րդ և 3-րդ մասերի, ՀՀ «Փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Լուսինե Սահակյանին (արտոնագիր՝ 999) մեղավոր ճանաչել «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 5.2.1 (1) ենթակետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Լուսինե Սահակյանի (արտոնագիր՝ 999) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն, և լրացուցիչ կարգապահական տույժ՝ իր հաշվին վեց ամսվա ընթացքում լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն՝ դեոնթոլոգիա թեմայով, ութ ակադեմիական ժամ ժամաքանակով:

3. Փաստաբան Լուսինե Սահակյանի (արտոնագիր՝ 999) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3 ենթակետի պահանջների խախտման հիմքով հարուցված կարգապահական վարույթը կարճել՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը հիմնավորված չլինելու հիմքով:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Լուսինե Սահակյանին և Դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան